ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/93 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության

ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 16.10.2018թ. հայտ է ներկայացրել նաև «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գինը կազմում է 33 000 ՀՀ դրամ, որի մեկ տոկոսը հավասար է 330 ՀՀ դրամի (ոչ ավել քան 50 000 ՀՀ դրամը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.10.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ներկայացվել Կոմիտե:

Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածով նախատեսված շեմը գերազանցող հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը: Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը համաձայն չէ վերը նշված որոշման և Կոմիտեի եզրակացության հետ, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 11.04.2018թ. թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 16.10.2018թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային

գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունն ընդհանրապես չունի հարկային պարտավորություններ, այլ ունի դեբետային մնացորդ 49 451 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը, հիմք ընդունելով վերոհիշյալ պաշտոնական քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն նշել է նաև, որ դրոշմանիշային վճարի մասով քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանալ կամ կանխատեսել, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, քանի որ 2018թ. ընթացքում մասնակցելով բազմաթիվ մրցույթների նման խնդիր Ընկերության մոտ չի առաջացել: Եթե դրոշմանիշային վճարը համարվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, ապա այս պարագայում ստացվում է, որ Ընկերությունը 2018թ. ընթացքում պետք է ունենար այդ պարտավորությունը և այն պետք է արտացոլված լիներ թե քաղվածքի, թե Կոմիտեի կողմից տրված եզրակացությունների մեջ, սակայն մինչև սույն Ընթացակարգը նման խնդիր չի առաջաջացել: Իսկ եթե Կոմիտեի կողմից կատարվել է նման փոփոխություն, ապա այս պարագայում առնվազն առկա է իրազեկման խնդիր, որպեսզի Ընթացակարգի մասնակիցները տեղեկացված լինեին և կատարեին համապատասխան վճարումները:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 9-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետը, 43-րդ կետի 3-րդ ենթակետը, 44-րդ և 45-րդ կետերը:

Ընկերությունը հայտնել է, որ վերջինս բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը Ընթացակարգի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ մեկուսացվելով պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Ընկերությունը գտնում է, որ վերջինս հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետային հարկային պարտավորությունների իրականում չի ունեցել, քանի որ ինչպես արդեն նշվել է Ընկերությունը հիմք ընդունելով պաշտոնական քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ Ընկերության հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել Ընթացակարգին, տեղեկացված կամ իրազեկված չլինելով, որ Կոմիտեն դրոշմանիշային վճարները այսուհետ դիտարկվում են որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ և այդ պարտավորությունները չկատարելը կարող է դիտարկվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.10.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումները և սույն որոշումից հետո կայացված այլ որոշում, եթե այդպիսին առկա է:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.11.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.10.2018թ. թիվ 02/61-23049 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը: (գնային առաջարկի մեկ տոկոսը):

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է և խախտում առկա չէ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.11.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 16.10.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.10.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի 29.10.2018թ. բողոքը, Երևանի քաղաքապետարան 31.10.2018թ. թիվ 02/61-23049 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 47 և 48 շենքերի հարևանությամբ այգու տարածքում գտնվող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/94» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն 16.10.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 33 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 18.10.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.10.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 16.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 16.10.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.10.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը: Առաջնորդվելով Կարգի 44-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 16.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 16.10.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.10.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումները և սույն որոշումից բխող այլ որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**